ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանարիկա Մ. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկաթի դարի մշակույթում. Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.) 8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բաղալյան

ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները ԱՄԴԽՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.) 20

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի) 43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.) 66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.) 78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասատրյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաազգագրական ակնարկ) 104

Լիլիա Ավանեսյան

Մ. Դ. Իսաևի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.) 124

Միհիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում (առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն) 138

Ասպոիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.) 150

Քաքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.) 173

Համլիկ Պետրոսյան
Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզաննա Ծատուրյան
Չարենցի հուշասրահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան
Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմածառի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան
Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան
Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 263

DOI:10.56653//18290361-2023.11-104

Արտակ Ասատրյան
Հայաստանի պատմության թանգարան
sardarapatasatryan@gmail.com

ՊՂՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՎԱՅՐԵՐՈՒՄ 19–20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ (ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)*

Հիմնաբառեր. Արևմտյան Հայաստան, պղնձագործություն, արհեստագործական կենտրոններ, առևտուր, Թոխատ, Երզնկա, Կարին:

Ներածություն

17-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանը վարչականորեն բաժանվում է Էրզրումի (Կարին), Վանի, Սեբաստիայի (Սվազ), Ախալցխայի, Կարսի և Դիարբեքիր **նահանգների**[1] (այս և հաջորդ ընդգծումները հեղինակինն են) (Մելքոնյան 2012, 6: Հայաստանի ազգային ատլաս 2008, 53, 55, 62): Չնայած ծանր քաղաքական ու տնտեսական պայմաններին՝ 1639 թ. Կասրե-Շիրինի հաշտությունից հետո Արևմտյան Հայաստանը ինչոր չափով վերականգնեց Եվրոպա-Ասիա առևտրական միջնորդի երբեմնի դերակատարությունը: Տնտեսական ճգնաժամը հաղթահարելու նպատակով օսմանյան սուլթանները հարկադրված էին պարբերաբար ձեռներեց հպատակ առևտրականներին օժտել որոշակի արտոնություններով, հնարավորինս հովանավորելով միջազգային առևտուրը: Թեև մինչև 19-րդ դարի կեսերը ձեռնարկվող միջոցառումները մասնակի արդյունք տվեցին, և կայսրությունը շարունակեց մնալ հետամնաց ագրարային բռնատիրություն, այնուամենայնիվ, միջազգային առևտուրը, շնորհիվ հայերի, հույների ու հրեաների, զգալի առաջընթաց ապրեց (Մելքոնյան, 2012, 6–7):

17-րդ դարի վերջերից Արևմտյան Հայաստանի տարածքով դեպի Եվրոպա, Կենտրոնական Ասիա ու Հնդկաչին իրականացվող առևտրով պայմանավորված

---

* Ստացվել է 15.03.2023թ., ուղարկվել է գրախոսման 17.03.2023թ., ընդունվել է տպագրության 07.07.2023թ.:

1 1555 թ. Ամասիայի և 1639 թ. Կասրե Շիրինի պայմանագրերով Հայաստանը բաժանվեց Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև: Օսմանյան կայսրությանն անցած Արևմտյան Հայաստանը բաժանվեց վեց նահանգների (թուրք. **Էյալեթ**, 1864 թ.-ից՝ **վիլայեթ**): Վերջինները բաժանվեցին գավառների (թուրթ. **լիվա** կամ **սանջակ**), որոնք էլ իրենց հերթին բաժանվում էին գավառակների (թուրք՝ **կազա**), որոնք էլ իրենց հերթին բաժանվում էին գյուղախմբերի կամ համայնքների (թուրք.՝ նահիե), տե՛ս Բադալյան 1986, 13: Մեր աշխատանքում նախապատվությունը տվել ենք հայերեն անվանումներին:

աճեց արևմտահայ քաղաքների, մասնավորապես՝ Էրզրումի, Վանի, Արաբկիրի, Թոխատի (Եվդոկիա), Ակնի, Կարսի, Բայազետի, ավելի ուշ՝ Մուշի, Բաղեշի (Բիթլիսի) նշանակությունը: Ի տարբերություն գյուղական կյանքի, որը շարունակեց մնալ ծայրագույն հետամնացության պայմաններում, քաղաքային կյանքը նկատելիորեն աշխուժացավ (Մելքոնյան 2012, 7):

Հատկանշական է, որ օսմանյան տիրապետության սկզբնական շրջանում՝ 16–17-րդ դարերում, Արևմտյան Հայաստանի և՛ քաղաքները, և՛ գյուղերը գերազանցապես հայաբնակ էին (Մելքոնյան 2001, 31–34: Մելքոնյան 2005, 47, Մելքոնյան 2012, 7: Թոքմաճեան, 2016, 278–285):

Ի թիվս այլ արհեստների, նշված ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում և հարակից տարածքներում (պատմական Փոքր Հայքում, Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում) մեծ տարածում է ունեցել պղնձագործությունը, որն այս ընթացքում եղել է և՛ արհեստ, և՛ առևտրի կարևոր-առաջնային ճյուղ, որով ավանդաբար զբաղվել են հիմնականում հայերը (Պատրիկ 1974, 586–587: Սրվանձտյանց 1982, 183: Կարապետեան, 1992, 90, 93: Մելքոնյան 2012, 12–13: Սուքիասյան 2019, 437):

Մինչ այժմ 17–20-րդ դարասկզբի հայկական պղնձագործական արհեստին անդրադարձ է կատարվել մասնակի կերպով[2]: Սույն աշխատանքում, առաջնորդվելով արդեն գոյություն ունեցող պատմաազգագրական և արխիվային հարուստ նյութով և պատմահամեմատական մեթոդով, անդրադարձել ենք հայ ավանդական արհեստների այս կարևոր ճյուղին՝ նպատակ ունենալով տալ մետաղագործական արհեստի այս կարևոր ճյուղի զարգացվածության աստիճանն ու լայն տարածումը, ինչպես նաև դրա ունեցած տեղն ու դերը հայոց մեջ:

Աշխատանքին առավել համակարգված բնույթ տալու նպատակով արհեստագործական, ինչպես նաև առևտրական կենտրոններին անդրադարձել ենք ըստ տվյալ ժամանակաշրջանի գոյություն ունեցող վարչաքաղաքական բաժանման, քանզի, ինչպես կտեսնենք աշխատանքում, դրանք առավելագույնս փոխկապակցված են մեկը մյուսին:

Սեբաստիայի նահանգ

Սեբաստիայի (Սվազ) նահանգը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի ընդարձակ վարչատարածքային միավորներից էր և համապատասխանում էր հիմնականում Փոքր Հայքի տարածքին: Նահանգային կենտրոնի՝ Սեբաստիա քաղաքի անունով կրում էր «Սեբաստիայի վիլայեթ» անունը և բաժանված էր չորս սանջակների (գավառների)՝ Սեբաստիայի, Ամասիայի, Թոխատի (Եվդոկիա), Շապին-Գարահիսարի (Սահակյան 2002, 86: Սահակյան 2003, 77):

---

2 17–20-րդ դարասկզբի հայկական պղնձագործության անդրադարձել են մի շարք հեղինակներ՝ Կարապետեան 1977, 197–242: Տագէսեան 2015, 375–398: Տագէսեան 2022ա 339–350: Տագէսեան 2022բ, 525–550, Ասատրեան 2016, 125–150, Ասատրեան 2018, 253–266: Ուշագրավ է, որ ժամանակի ընթացքում գրվել են բազմաթիվ գիտական աշխատություններ՝ նվիրված հին և միջնադարյան մետաղագործական արհեստներին, այդ թվում նաև պղնձագործությանը՝ Мартиросян 1977: Առաքելյան 1958 և այլն:

Սեբաստիա նահանգի տնտեսության ու ժողովրդագրության մասին արժեքավոր տվյալներ է հաղորդում Գ. Ջոհրապի «Սեբաստիայի նահանգը տնտեսական և ազգագրական տեսակետից և հայերի դրությունը» հոդվածը, որը 1913 թ. անստորագիր հրապարակվել է Փարիզի «Pour les Pouples» հանդեսի 9-րդ համարում: Ըստ Ջոհրապի՝ Արևմտյան Հայաստանի բոլոր վեց նահանգների հասարակական կյանքում հայ բնակչությունը առաջատարն էր թե՛ տնտեսական, թե՛ մշակութային գործունեությամբ (Սուքիասյան 2019, 437):

Ըստ 1912–1913 թթ. վիճակագրական տվյալների՝ նահանգի (Սեբաստիա, Թոխատ, Ամասիա, Շապին-Գարահիսար) արտահանող 150 վաճառականներից 127-ը հայ էին, 23-ը՝ թուրք, իսկ ներմուծող 166 վաճառականներից հայեր էին 141-ը, թուրքեր՝ 13-ը, հույներ՝ 12-ը (Սուքիասյան 2019, 437): Ընդ որում, մետաղ ներմուծող առևտրականներից հայեր էին Սեբաստիայում 12-ից 12-ը, Թոխատում՝ 5-ից 3-ը, 2-ը հույներ էին, Ամասիայում՝ 10-ից 10-ը, Շապին-Գարահիսարում՝ 4-ից 4-ը (Պատրիկ 1974, 586–588):

Ուշագրավ տեղեկություններ են պահպանվել նաև Սեբաստիայի գավառում գոյություն ունեցող արհեստների, այդ թվում նաև պղնձագործության մասին: Այստեղ նույնպես, ինչպես Հայաստանի շատ վայրերում, արհեստները կենտրոնացած էին հայերի ձեռքում. «Քաղաքներու մէջ ամենուրեք արհեստները կեդրոնացած էին հայերուն ձեռքը: Հայն էր, որ կը ներմուծեր, կ'արտածեր, կը ստեղծէր և ժամանակի ու քաղաքակրթութեան հետ զուգընթաց կը քալէր: Հայը՝ ինչպէս անգլիացի Ատամ Կիպպոնը կ'ըսէր, «Ոսկի հաւկիթ ածող հաւն էր» Թուրքիոյ մէջ» (Պատրիկ 1974, 586):

Ըստ վերը բերված աղբյուրի՝ 1912–1913 թթ. Սեբաստիա քաղաքում գոյություն ունեցող 1750 արհեստավորներից 1500-ը՝ հայ, 250-ը՝ թուրք. այլազգիներ չկային, Թոխատում՝ 800 արհեստավորներից 500-ը՝ հայ, 200-ը՝ թուրք և 100-ը՝ հրեա, Ամասիայում՝ 1000 արհեստավորներից 700-ը՝ հայ, 150-ը՝ թուրք, 150-ը՝ տարբեր ազգերի ներկայացուցիչներ, Շապին-Գարահիսարում՝ 400 արհեստավորներից 350-ը՝ հայ, 50-ը՝ թուրք. այլազգիներ չկային (Պատրիկ 1974, 586–587):

Ներկայացված թվերն առավել, քան հստակ պատկերացում են տալիս Սեբաստիա քաղաքի, ինչպես նաև շրջակա քաղաքներում (գավառում) գոյություն ունեցող արհեստների և առևտրի մասին: Խոսելով Սեբաստիա քաղաքում գոյություն ունեցող արհեստների մասին՝ հեղինակը դրանց թվում նշում է նաև պղնձագործների շուկայի մասին (պախըրճինոց), որը բաղկացած էր 75 խանութներից (ներառյալ կլայեկագործները): Այստեղ պատրաստվում էին կաթսաներ, տնային զանազան սպասք, ափսեներ, սինիներ և այլն: «Յայտնի վարպետներ էին Ռուբէն Գազանճիեանը, Յակոբ Չէօրէկճեանը, Ոսկան Ղորզորեանը, Ղազար Բրդոտեանը, Շահինեան Հաճի Արթինը, Ճէզվէճի Օվակը, Ստամպօլցեան Մկրը, Թորոս Տիշիկեանը և այլն» (Պատրիկ 1974, 605):

Թոխատ (Եվդոկիա)

Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի՝ դեռևս 16–17-րդ դարերում Թոխատը Փոքր Ասիայի վաճառականության կենտրոնն էր (Ալպոյաճեան 1952, 1261–1266):

Վաճառականների քարավանները այստեղ էին գալիս ամեն կողմից՝ Մոսուլից, Բաղդադից, Դիարբեքիրից, Իզմիրից, Կեսարիայից, Զմյուռնիայից, Սինոպից և այլ վայրերից (Ալպոյաճեան 1952, 1263–1264: Մելքոնյան 2012, 10): Պոլսից բերում էին զանազան ապրանքներ, Պոլիս ուղարկում՝ կտավ, պտուղ, **պղնձեղեն**: Էրզրումից բերում էին **պղինձ**, երկաթ, որն այնուհետև որպես պատրաստի արտադրանք կրկին ուղարկում էին Էրզրում (Ալպոյաճեան 1952, 1263–1264):

Ըստ Ղ. Ինճիճյանի նույն իրավիճակն էր Թոխաթում նաև 18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբին. «ի Թօգատ գտան յառաջագոյն և գտանին ևս վաճառականք, զորուց նման սակաւ ունի տէրութիւն օսմանեան ընդ ամենայն սահմանս իւր, որ յԱսիա, անդ յաճախեն երթևեկութիւն կարաւանաց յամէնայն կողմանց, նաև վաճառականք հնդկաց ընդ Մոսուլ, նոյնպէս և վաճառականք պարսից…» (Մելքոնյան 2012, 10):

Հումքի բազային մոտ լինելը (Պատրիկ 1974, 6 – 7: Հայաստանի ազգային ատլաս 2008, 58) և արհեստագործական արտադրանքից ստացած եկամուտը հնարավորություն էին ընձեռում ու շահագրգռում հայ պղնձագործներին ավելի բարձր որակի ու մեծ քանակի ապրանք արտադրելու՝ գնորդի պահանջը բավարարելու, ինչպես նաև մրցակցությանը դիմանալու համար: 18-րդ դարավերջին և 19-րդ դարասկզբին, Ղ. Ինճիճյանի վկայությամբ. «Արհեստավորների առումով Թոխատը պետք է կոչել քաղաք պղնձագործների կամ ղազանչիների, որոնց արտադրածը համբավավոր և ընտիր է համարվում, քան օսմանյան տերության բոլոր վայրերինը: Թոխատի պղնձե գեղեցիկ ամանները, սեղանի սպասքը, կրակարանները, կաթսաները և այլն տարածված էին Էրզրումում, Կոստանդնուպոլսում, Ամասիայում և ավելի հեռու՝ Սամսոնում և այլ նահանգներում» (Ալպոյաճեան 1952, 1266: ՀԺՊ 1974, 96): Այս քաղաքում հայ պղնձագործների արհեստն առանց վերապահության զարգացել և արվեստի էր վերածվել: Եվդոկիան դարձել էր հանուր Թուրքիայի կարևոր ու մեծ ապագա խոստացող կենտրոններից մեկը (ՀԺՊ 1974, 96: Հայաստանի ազգային ատլաս 2008, 172):

«Թոքադու շուկան ճոխ է, բայց անկանոն. Խանութները ցիր ու ցան: **Ամենեն նշանավոր արվեստն պղնձագործություն**: Արղնու մատենեն և Կապան մատենեն ելած պղինձները հոս կը հալվին և կը ձուլվին, և ասկե կը բաժնվին այլ և այլ կողմեր. հոս կը շինվին նաև ամեն տեսակ պղնձի անոթ: Երբեմն քաղաքիս բնակչաց մեծ մասն այս **արվեստով** կըշահվեին, բայց այժմ պակսած է: Արհեստավորք Հայք են»-նշում է հեղինակը, ով 1878 թ. (Սրվանձտյանց 1982, 183) ճանապարհորդում էր Արևմտյան Հայաստանի քաղաքներով (Սրվանձտյանց 1982, 223, 224):

13–19-րդ դդ. եվրոպացի հեղինակները նույնպես մեծարժեք տեղեկություններ են թողել Հայաստանի ու հայերի մասին (Զուլալյան 1985ա, 56 – 72: Զուլալյան 1985բ, 23 – 40: Ազիզյան 2003, 31 – 35: Մուրադյան, 2005, 61: Մալոյան 2006, 37 – 46: Դումիկյան 167 – 174: Ստեփանյան 2012, 200–201, 205: Մխիթարյան 2017, 82–90): Նրանցից 19-րդ դարասկզբին Նապոլեոն Բոնապարտի կողմից Արևելք ուղարկված գեներալ Գարդանը Թոխաթ քաղաքի մասին խոսելիս նշում է. «Հազար կաթոլիկ հայեր կան այդտեղ: Պատրաստում են կտավեղեն, սակայն առևտրի գլխավոր նյութերն են 500000 օխա անագ և **մեծ քանակությամբ պղինձ**: Այս քաղաքը

մի պահեստ է Իզմիրի ապրանքների համար, որոնք հետո տարածվում են դեպի Էրզրում, Կեսարիա և Մոսուլ»: Նույն հեղինակը նկատել է, որ այս տարածաշրջանը ընդգրկված է իր հայրենիքի հետ կատարվող առևտրում, նշելով նաև, որ այդ առևտրում, մասնավորապես ասիական երկրներում, ամենամեծ դերակատարը հայերն են (Մելքոնյան 2012, 12–13):

1886–87 թթ. տվյալների համաձայն, ի թիվս այլ ապրանքների, Թոխատ է ներմուծվել 100 000 օխա պղինձ և նույնքան էլ պղնձի կտորտանք, իսկ արտահանվում էր 300 000 օխա պղնձե անոթներ (Ալպոյաճեան 1952, 1291–1293):

Ըստ 1880 ական թթ. տվյալների՝ Թոխատում, ի թիվս այլ արհեստով զբաղվողների խանութների, կար պղնձագործների 150 խանութ, աշխատողների ընդհանուր 250–300 հոգի քանակով, որոնք բոլորը հայեր էին (Ալպոյաճեան 1952, 1311–1312):

«Պղինձի վաճառականները ուրիշ քաղաքներէ անգործածելի դարձած պղինձի ամաններ բերել կու տային և ուրիշ կտորտանքներու հետ հալեցնել կու տային դալխանեի մէջ: Հալած պղինձը մեծ ու փոքր կաղապարներու մէջ կը լեցնէին: Յետոյ ջուրին մէջ ձգելով կը պաղեցնէին և անոնց վրայի աւազը կը մաքրէին , իւղով, աղով և անուշադրով (Ammoniac, նիշատր): **Այս աշխատանքը կը կատարէին թուրքերը, իսկ անկէ վերջ հայերն էին որ պղինձը կը գործէին, զանազան առարկաներու շինութեան համար**: Թափուած պղինձները (**կիլիկ կը կոչուէր**), կը տարածուէին չեքիճճիներուն խանութը, ուր անոնք կրակով կը տաքցուէին և կարմրած վիճակի մէջ կը ծեծուէին 8–10 անձերու կողմէ: Ասոնցմէ մէկը ունելիով (**ղսաճ**) կը բռնէր կարմրած պղինձը և միւսները կարգով իրենց մուրճերը կը զարնէին, մինչ բռնողը շարունակ կը դարձնէր կատարեալ կանոնաւորութիւնով: Այս կանոնաւոր և ներդաշնակ զարնուածքով կարծես թէ երաժշտութիւն մը կը յօրինուեր, որուն նուագապետը կը հանդիսանար փոքր տղայ մը, որ սալին կը զարնէր չափը կամ կշռոյթը պահելու համար: Այս տղան կը կոչուէր **ղէյտէճի**: Այսպէս պղինձի կոյտեր շերտերու կը վերածուէին: Այս աշխատանոցներուն մէջ մէկը միշտ կրակին դիմացն էր, պղինձները տաքցնելու համար, օգնական ունենալով փոքրիկ տղայ մը, որ փքոցը (**քէօրիւկ**) կը գործածէր: Պղինձի տաքցած կտորները յաջորդաբար կը բերուէին սալին վրայ և տափակցուածները կը նետուէին ջուրը (Ալպոյաճեան 1952, 1276):

Կլոր թերթիկներու վերածուած պղինձները կը տարուէին պղնձագործներու խանութները, ուր կը շինուէին զանազան տնական ամաններ, սաներ և այլն: Խանութի մը մէջ վեցէն քսան անձեր կը գործէին, երկու շարքի վրայ, դէմ դիմաց նստած, իւրաքանչիւրը իր սալին վրայ աշխատելով: Պէտքին համաձայն սալերը և մուրճերը կը փոխուէին: Կը գործածէին նաև մկրատներ, կարկիններ, և ուրիշ գործիքներ: Այս խանութներուն մէջ նաև կար օճախ և քէօրիւկ: Եթէ գործի օր մը, մէկը քաղաքին բլուրներեն մին բարձրանար, կը լսէր ղազանճիներու խանութներուն մուրճերուն ձայնը, որ շատ հեռուներէն կը լսուէր: Երբ ամանները ղազանճիին խանութին մէջ ձևաւորուէին, կը տարուէին Զարխճիին խանութը, ուր մեքենայի մը վրայ անցուելով, կը տաշուէին անիւով մը, որ կը դարձնէր մէկը՝ շարժիչի (մոթոր) դեր կատարելով: Ասկէ վերջն էր որ զմոնիտ (զըմփառայ) թուղթով կը փայլեցնէին

և կը տանէին վաճառականին, որ խնամքով ծրարելով, սնտուկներով կը ղրկէր Թուրքիոյ զանազան վայրերը, Գասթէմունի, Էնկիւրիւ, Գոնիա և Կիլիկիոյ զանազան քաղաքները, ուր վաճառ կը հանուէին (Ալպոյաճեան 1952, 1276–1277)։

Քաղաքին մէջ գտնուող **թաճիրները** գրաւած էին ամբողջ փողոց մը, որ **թաճիրնոց** կը կոչուէր։ **Այս պղինձեղէններէն ոմանց վրայ ծաղիկներ, թռչունի պատկերներ և անուններ կը փորագրեին թաճիրները, որոնք բացի երկու յոյներէ և մէկ թուրքե, բոլորն ալ հայ էին**։ Կային նաև **ըփրըգճի** կոչուած արհեստաւորները, որոնք կը շինէին նրբարուեստ ափսէներ, գաւաթներ նայլն, զարմանալի նրբութեամբ և գեղեցկութեամբ (Ալպոյաճեան 1952, 1277)։

Պղնձագործներու օժանդակներն էին կլայկելողները (**ղալայճի**), որոնք թէ՛ նոր և թէ՛ գործածուած ամանները կը կլայկէին զանոնք ժանգոտելէ արգիլելու համար։ Բոլոր արհեստաւորները ամէն առարկայ չէին կրնար շինել։ Երբեմն նոյնիսկ մի քանի կտորներով, որոնք իրարու հետ ագուցած էին, կը կազմուէին անոնք։ Ղազանճիներու և չարխըճիներու պղնձի կտորները և տաշեղները կրկին ձուլարան տարուելով կը հալեցուէին և դարձեալ կը գործածուէին (Ալպոյաճեան 1952, 1277)։

Պղնձագործութիւնը, ինչպէս կը տեսնուի, եռուզեռ ու մեղուաջան աշխատութեան վայր մը դարձուցած էր Եւդոկիան» (Ալպոյաճեան 1952, 1277)։ Մեջբերվածն առավել քան անհրաժեշտ է, ցույց է տալիս Թոխատում գոյություն ունեցող պղնձագործության արհեստի վիճակն ու պահպանվածությունը։

Ըստ 1895–96 թթ. տվյալների՝ չնայած տնտեսական անկմանը, Թոխատի գլխավոր արհեստներից մեկը շարունակում էր մնալ պղնձագործությունը, որով զբաղվում էին 250–300 հայ՝ 10–60 տարեկան (Ալպոյաճեան 1952, 1320)։

Էժան ապրանք ստանալու ձգտումը և մրցակցությունը մեծապես վնասեցին պղնձագործական արտադրանքի գեղարվեստական մետաղամշակության գործ լինելուն։ «Պղինձեղենները դադրեցան նրբարուեստ … գործեր ըլլալէ։ **Ճարտար արհեստաւոր** հայուն դէմ կանգնեցաւ չէրչի հայը, և մեծ վնաս հասցուց Թոգատի արհեստներուն, պղինձեղէնները աւելի կոշտ պատրաստելով… Պղինձի գործին մէջ Եւրոպան էր մրցակիցը, իւր տարբեր նիւթերով պատրաստուած անօթներով և սաներով…» (Ալպոյաճեան 1952, 1320)։

Թոխաթցի արհեստավորները մրցակցությանը դիմանալու համար ստիպված էին միջոցներ ձեռք առնել. «… եվրոպական պղինձ ու նուրբ կաղապարներու տեղ փայտէ կաղապարներ գործածել սկսան…», որպեսզի կարողանային ապրանքի գինը զեղչել (Ալպոյաճեան 1952, 1320)։

Արաբկիր

16-ից մինչև 18-րդ դարի երկրորդ կեսը Արաբկիրի գավառը ընդգրկված էր Սեբաստիայի նահանգում (Հայաստանի ազգային ատլաս, 2008, 53, 55, 62)։ 1880-ական թթ. այն մտցվել է Խարբերդի նահանգի մեջ (Սահակյան 2008, 155)։ Գավառի կենտրոնը համանուն քաղաքն էր (Փոլատեան, 1969, 45)։ Արաբկիր քաղաքում այլ արհեստների շարքում նշվում է նաև պղնձագործությունը (Փոլատեան, 1969, 139)։ Հեղինակը կարճ, սակայն դիպուկ կերպով նշում է, որ «Ասիական Թուրքիոյ

քաղաքներէն հազիւ մի քանին Արաբկիրի պղնձագործներու արտադրած առարկաները կրնան արտադրել կամ գերազանցել: Պղինձը Եւրոպայէն կը ներածուի» (Փոլատեան, 1969, 139):

Կեսարիա

1639 թ. Կասրե-Շիրինի պայմանագրից հետո (17-րդ դ. երկրորդ կեսից մինչև 18-րդ դ. առաջին կեսը) Կեսարիան ընդգրկված էր Կարամանի էյալեթում (Հայաստանի ազգային ատլաս, 2008, 53, 55), իսկ 18-րդ դ. երկրորդ կեսից՝ Կեսարիայի փաշայությունում (Հայաստանի ազգային ատլաս 2008, 62):

Հեղինակը, վկայակոչելով մի շարք պատմաազգագրական աղբյուրներ, խոսելով 19-րդ դարում և 20-րդ դարասկզբում Կեսարիայում գոյություն ունեցող արհեստների ու առևտրի մասին, նշում է «Գաղափար մը տալու համար թէ կեսարահայերը ինչ դիրք ու դեր ունէին, պիտի տամ անունները **գլխաւոր ճարտարարուեստական** տուներուն և արհեստաւորներուն» (Ալպոյաճեան 1937, 1497): Այնուհետև թվարկում է **ճարտար արուեստներն** ու արհեստները՝ եազմայի արհեստագործներ (Ալպոյաճեան 1937, 1498), ոստայնանկներ կամ ջուլհակներ (Ալպոյաճեան 1937, 1499), գորգագործութիւն (Ալպոյաճեան 1937, 1499), …, ոսկերչութիւն (Ալպոյաճեան 1937, 1513), ժամագործութիւն (Ալպոյաճեան 1937, 1518) և այլն…

Վերը թվարկված շարքում հեղինակը ծավալուն և արժեքավոր պատմաազգագրական տեղեկություններ է հաղորդում պղնձագործական արհեստի ու արհեստավորների քանակի մասին, որից մի քանի հատված անհրաժեշտ ենք համարում մեջբերել ամբողջությամբ. «… Կեսարիոյ մէջ բաւական զարգացած էր նաև պղնձի մետաղագործութիւնը, և բազմաթիւ վաճառականներ կային որ ո՛չ միայն պղինձը կը ներածէին այլ զայն գործել կուտային արհեստավորներու, և պղնձեղէն անօթներու վաճառականութիւնը կ՚ընէին,- նշում է հեղինակը, ապա շարունակում,- միակ բացառութիւնն էր ծերունի Կարապետ Ճամճեանը (պղնձեղէնի վաճառական Ճամճեաններէ տարբեր ընտանիքէ մը) որ միայն **պղինձ տախտակները** կը ներածէր և արհեստաւորներուն կը ծախէր, միւսները՝ արհեստաւորներու պատրաստել կու տային պղնձեղէններ որոնք **Թօգատի գործերուն չափ յաջողակ էին**» (Ալպոյաճեան 1937, 1518–1519): Ինչպես տեսնում ենք, Թոխատի պղնձեղեն արտադրանքն այնքան կատարյալ էր, որ դարձել էր համեմատության և որակի չափանիշ:

Կեսարիայում կար 35 պղնձագործ, ովքեր աշխատում էին վաճառականներից գնված պղնձով և հաճախ ստիպված էին ենթարկվել նրանց թելադրած պայմաններին: Այս պատճառով 1890-ական թվականների սկզբներին պղնձագործ արհեստավորները երկարատև գործադուլ են կազմակերպում, որից հետո «Հաճի Յովհաննէս Մարթաեան այս տեսակ անպատեհութեանց տեղի չտալու համար կը կազմակերպէ պղնձագործ էսնաֆը, իր արհեստապետութեամբ, սակայն 1893ի Փոքր Հայքի յեղափոխական կազմակերպութեան մատնութեան հետևանօք, երբ կառավարութիւնը կը հալածէր Հայերը, վաճառականները կազմալուծելու համար այս միութիւնը, կառավարութեան մատնանիշ կ՚ընեն զայն և Հաճի Յովհաննէս Մարթաեան կը ձերբակալուի և կը բանտարկուի: Կառավարութիւնը զինքը կը

հարկադրէ հրաժարիլ **էսնաֆ պաշիութենէ** և ուրիշ մարդ մը՛ կ՛անուանէ, որ անձեռնահաս ու անկարող, չի կրնար գործը շարունակել և գրեթէ այս միջազգային-վասնզի Յոյն և Թուրք պղնձագործներ ալ կային-կազմով էսնաֆական միութիւնը կը կազմալուծուի: Տասնեակ մը տարիներ վերջը, կրկին բարեսիրտ վաճառական մը նկատելով որ քաղաքին Հայ 35ի չափ արհեստաւորները երբեմն դրամական անցուկ վիճակի մը մատնուելով կ՛ստիպուին բադրոններու քմահաճոյքին խաղալիք ըլլալ, անոնց պէտքերը աժան աժան հայթայթելով, այս արհեստաւորներուն մէջէն 7 հոգի ընտրելով արհեստաւորական ժողով մը կը կազմէ, և անոր տրամադրութեան տակ կը դնէ դրամագլուխ մը, որպէսզի նեղութեան մէջ գտնուող արհեստաւորին գործ հայթայթուի կամ փոխատուութիւն ըլլայ: Բնական է, որ այս կարգադրութեան շնորհիւ արհեստաւորները այլևս չստիպուեցան իրենց աշխատութիւնները նուազագոյն վարձքով ծախել ուրիշին» (Ալպոյաճեան 1937, 1519):

Արհեստավորական այս ժողովը նաև իր կարգավորիչ դերն ուներ: Օրինակ, երբ պղնձագործ արհեստավորներից մեկն իրեն հարբեցողության տար, մյուսները հորդորներով ու այլ միջոցների դիմելով աշխատում էին ամեն ինչ անել, որ նա թողներ իր այդ սովորությունը և սեփական ընտանիքը թշվառության գիրկը չնետեր «**Այս օգտակար ընկերակցութիւնը**,- նշում է հեղինակը,-**որ չափազանց պատուաբեր էր Կեսարիոյ համար, դժբախտաբար երկար կեանք չէ ունեցած**» (Ալպոյաճեան 1937, 1520):

Այնթապ (Մարաշի նահանգ)

Պղնձագործությունը զարգացած էր նաև Այնթապում: 19-րդ դարի կեսերին այստեղ գործում էին շուրջ 60 արհեստանոց: Յուրաքանչյուր արհեստ ուներ 4–10 գործավոր, որոնք բավականին բարձր էին վճարվում, հատկապես՝ վարպետները (Կարապետեան 1992, 90):

«Ինչպէս վկայում է Գ. Պարսումեանը, Այնթապի առաջին պղնձագործները կլայագործներ էին, որոնք անագապատելուց առաջ, նախնական գործիքներով շտկում էին պնակների և կաթսաների ծռմռուած մասերը: 19-րդ դարի կէսերին Այնթապում մի շարք կլայագործներ հմտացան պղնձագործութեան մէջ և սկսեցին արտադրանք տալ: Նախապէս Այնթապի պղնձեղէնը եկել է Թոքաթից: «1915-ի ատենները, շատ տուներ դեռ կը գործածէին Թոքատի գործ պղնձեղէններ»: Գ. Պարսումեանը վկայում է, որ նախքան ևրոպական պղնձի (**ֆիրենք պաքրը**) ներածումը, բացուած պղնձաթերթը բերուել է Մարաշից» (Թոքմաճեան 2016, 18 -19):

Աչքի ընկնող պղնձագործական տներն էին Արսլանյանների պղնձագործական տները, որոնք բաժանված էին չորս ճյուղի՝ «1. Արսլանեան Պապայենց գերդաստանը՝ վաճառական-պղնձագործ, 2. Գառնը Պէօյիւքենց գերդաստանը՝ վաճառական-պղնձագործ, 3. Ջհուտ Արսլանենց գերդաստանը, 4. Պապա Շահենց գերդաստանը»: Նրանց հաջորդում էին «…Գնաճեան, Սրապիոնեան, Մաղաքեան, Մանուկեան և Փաթանեան գերդաստանները: Ասոնցմէ վաճառական-պղնձագործ էր Գնաճեանն ալ»: Նշանավոր պղնձագործ վարպետներ էին «Պարպարա Կարուճը, Սրապիոն Սրապիոնեանը, Ներսէս Մանուկեանը, Ներսէս, Ատուր և Յովհաննէս Ալանեան եղբայրները, Գէորգ Փաթանեանը, Ներսէս Կիւ-

լէսերեանը (Կարապետեան 1992, 90), Լևոն, Մովսէս, Նազար և Պետրոս Անսըրլեան եղբայրները» և ուրիշներ (Թոքմաճեան 2016, 278 -285): Սակայն պղնձագործ վարպետներու ամենէն յայտնին էր Մելքոնի տղայ Կարապետ Խալֆէն, որ **գալեմքիար** պատուանունն էր շահեր իր փորագրութիւններուն և կիսաքանդակներուն համար: Իր յաջորդն եղաւ Մելքոն Ուստան, որ ի միջի այլոց շինեց թորիչ մեքենայ մը ճշգրիտ կերպով գտնելու համար օղիի բարկութեան աստիճանաչափը: Փոխանակ Տէրզօր աքսորուելու՝ ինչպէս հազարաւորներ՝ աքսորուեցաւ Դամասկոս Ճեմալ փաշայի հրամանով, ուր և մեռաւ 1918-ին» (Կարապետեան 1992, 90, 93):

Արսլան-Պապան ուներ երեք որդի, ովքեր հայտնի էին «...Պապա-Շահի տղաք անունով: Երեք եղբայրներ էին անոնք՝ Ներսէսը, Ատուրը և Յովհաննէսը: Ատուրը մեռաւ Հալէպ. 1946-ին Յովհաննէսը ներգաղթեց Հայաստան, ուր և մահացաւ յետագային: Ներսէսի զաւակներէն Արևը քանիցս արժանացաւ յիշատակութեան և մրցանակի պղնձեայ, պրոնզեայ և արծաթեայ արուեստագիտական իր արտադրութեան Ի՛նքն էր որ պատրաստեց Երուանդ Քոչարի **Սասունցի Դաւիթ** արձանին պղնձապատումը» (Կարապետեան, 1992, 93):

Հայտնի փորագրող վարպետներ՝ **գալեմքիարներ** էին «Իշխանեանը, Պանտալեանը, Իսկենեանը և Պոշկեզենեանը» (Կարապետեան 1992, 94):

Խարբերդի նահանգ

Խարբերդի նահանգը (Մամուրեթ – ուլ-Ազիզ) ներառում էր Խարբերդի, Դերսիմի ու Մալաթիայի գավառները և մեկ տասնյակից ավելի գավառակներ: Կազմավորվել է 1879–80 թթ., (Դիարբեքիրի նահանգի արևմտյան մասում) երբ Խարբերդի գավառին կցվեցին Մալաթիայի և Արղանայի գավառները, իսկ 1888-ին՝ առանձին նահանգ հանդիսացող Դերսիմը (Հայկ, 1959, 38: Փոլատեան 1969, 40–41, Բաբլումյան 2008, 168 – 169: Բաղալյան 2020, 154–155):

19-րդ դ. կեսերին Խարբերդն առևտրաարհեստավորական կենտրոն էր. արտահանվում և ներմուծվում էր ապրանքի լայն տեսականի: Առևտրական կապեր ուներ Հալեպի, Պոլսի, Տիգրանակերտի, Այնթապի, Սեբաստիայի, Սամսոնի, Թոխատի, Ադանայի, Արաբկիրի, Բալուի, Մալաթիայի, ինչպես նաև արտասահմանյան այլ երկրների հետ (Հայկ 1959, 638):

Խարբերդ քաղաքից 40 մղոն հեռավորության վրա էր գտնվում Արղնի Մատէն կամ Պախր Մատէն հին քաղաքը, որն իր անունը ստացել էր շատ մոտ գտնվող պղնձի հանքերի շնորհիվ (պախր՝ թուրք. պղինձ): 19-րդ դ. կեսերին քաղաքի բնակչությունը հաշվվում էր 800 տուն, որոնցից 200-ը՝ հայ, 200-ը՝ թուրք, 400-ը հույն, որոնք ապրում էին համապատասխանաբար իրենց թաղերում (Հայկ 1959, 656):

«Մատէնի պղինձի հանքերը նշանաւոր էին իրենց որակով և քանակով: Երկար տարիներու պեղումները յառաջ տարուած էին անշուշտ նախնական միջոցներով, սակայն հանքին առատութիւնը արտասովոր էր և պղինձի երակներուն տարածութիւնը անոր շրջակայքին մէջ կարծես վերջ չունէր ամայի հողերուն տակ առատօրէն ցրուած» (Հայկ 1959, 656):

Հանքահանությունը կատարվում էր նախնական պարզ եղանակով: Հանքը փորում էին բահով ու բրիչով, հետո կողովներով հարյուրավոր աստիճաններով

բարձրացնում վեր: Այնուհետև «հողախառն նիւթերը վառելով՝ մետաղը կը զատէին հողէն: Այս գործողութիւնը կը կոչէին **ֆիլիքա**, որ հաւանաբար յունական բառ մըն է: Հանուած մետաղը հալեցնելու և ձուլելու համար կը փոխադրուէին գետին եզերքը շինուած ձուլարաններու մէջ (Խալխանէ): Պղինձը կարմիր ջուրի նման կը հոսէր ձուլարաններուն մէջ, հոն կը կաղապարուէր, կը պաղէր, որպէսզի պատրաստ ըլլար հեռաւոր տեղեր, Կ. Պոլիս և մինչև Անգլիա ղրկելու» (Հայկ 1959, 657–658):

Հաստատված է, որ ձուլած պղինձը պարունակում էր որոշակի քանակությամբ ոսկի: Երբ պղնձի ձուլակտորները պարբերաբար տեղափոխվում էին Անգլիա, այնտեղ կրկնակի ձուլման ենթարկելով զատում էին ոսկին պղնձից և դրանով փակում փոխադրության ծախսերը (Հայկ 1959, 658–659):

Ըստ 19-րդ դարի 80-ական թթ. մի հաշվարկի՝ Պախըր Մատէնի պղնձահանքերն այնքան շատ էին, որ նույնիսկ քաղաք տեղափոխված և շինարարության մեջ գործածված քարերը պղնձախառն զանգվածներ են եղել: Նույնիսկ դրանով հանդերձ՝ տարեկան մինչև 2 000 000 օխա՝ 3000 տոննա պղինձ էր արտադրվում՝ 240 000 թուրքական ոսկի ծախսով, որն Օսմանյան պետության համար մեծ եկամուտ էր ապահովում (Հայկ 1959, 659):

1914 թ. երբ Գերմանիան իր ձեռքն առավ Թուրքիայի նկատմամբ վերահսկողությունը, մեծ քանակությամբ պղինձ տարվեց Գերմանիա (Հայկ 1959, 659):

Քաղաքում, ի թիվս մի շարք առևտրական տների ու գործարանների (Հայկ 1959, 638–643), գործում էր նաև Բարիկյան եղբայրների երկաթագործական գործիքներ պատրաստող գործարանը (Հայկ 1959, 644–648): Այստեղ « … երկաթը, պղինձը, արոյրը և այլն կը սկսին հալիլ և ջուրի պէս վազել՝ արտադրելով ցորենի, բամպակի և երկրագործութեան յատուկ բազմաթիւ գործիքներ:

Գործարանը և անոր արտադրութիւնը մեծ համբաւ կը ստանան: Գործիքները կը սկսին ղրկուիլ ոչ միայն Խարբերդի երկրագործներուն, այլ Թուրքիոյ զանազան կողմերը, մինչև Պարսկաստան: Այս նորահնար մեքենաները դաշտի աշխատաւորներու հնադարեան դանդաղ և անհաստատ գործիքներուն քով կը դառնան հրաշալի, առևտուրը կը ճոխացնեն և յաջողութիւնը կը դարձնեն անխուսափելի» (Հայկ 1959, 645):

Դերսիմ

Վարչական կենտրոնը, ինչպես վերը նշվեց, Դերսիմ քաղաքն էր՝ շրջակա տասը գյուղաքաղաքով և չորս հարյուր յոթանասուն գյուղով (Հալաջյան 1973, 31-32):

Դերսիմում նույնպես պղնձագործությունն առավելապես գտնվում էր հայերի ձեռքում: Տեղացի արհեստավորները Խարբերդից, Տիգրանակերտից, Երզնկայից և նույնիսկ Կարինից բերված պղնձե սալիկներից տեղում պատրաստում էին կաթսաներ (կատսա, խալկիններ, թրք՝. ղազան), սաներ, ափսեներ, սինիներ (կերակրի մատուցման համար), սիթիլներ (փարխաջ), կյուկյումներ, լականներ, կերակրի մեծ ու փոքր ամաններ, թասեր, սկավառակներ, բաժակներ, կոնքեր, **ջրածիկներ** (**ըպրգ**) և տնային զանազան իրեր (Հալաջյան 1973, 168):

Պղնձագործի արհեստանոցում օգտագործված ամենագլխավոր գործիքները շատ նախնական էին՝ փուքս, սալ, երկաթե և փայտե մուրճ, ունելի, կտրոց, պողպատե սրածայր դուր, ծակող կլոր բիզ, երկաթե կլոր լծակ և այլն (Հալաջյան 1973, 168):

Արտադրանքի գլխավոր հիմքը մարդկային ուժն էր, զորավոր աչքը, ուժեղ բազուկը, փայտե կլոր մուրճի ուղիղ հարվածը և հմտությունը (Հալաջյան 1973, 168):

Նույն արհեստով զբաղվող վարպետները համախմբվում էին նույն հրապարակում կամ շուկայում, մեկը մյուսին կից կրպակներում կամ փոքրիկ խանութներում (Հալաջյան 1973, 168):

Պղնձե ամանները ծաղկազարդված էին զանազան գծանկարներով՝ թռչունների, եղնիկների, ձկների նկարներով, որոնք նրբությամբ փորագրված էին պողպատե սրածայր դուրի օգնությամբ (Հալաջյան 1973, 168):

Պղնձագործության պաշտպան և հովանավորող սուրբը Պողոս-Պետրոսն էր, որի անվանակոչության տարեդարձի օրը տոն էին համարում և չէին աշխատում» (Հալաջյան 1973, 168):

Մալաթիա

Մալաթիայի գավառը գտնվում էր Փոքր Հայքի հարավում, Եփրատի աջակողմյան վտակ Մելասի ավազանում: Գավառն ունեցել է հարուստ պատմական անցյալ. 1178–1315 թթ. ընթացքում գտնվել է սելջուկ-թուրքերի, 1315–1516 թթ. ընթացքում թուրքմենական ցեղերի իշխանության տակ: 1516 թ. հայտնվել է Օսմանյան թուրքերի տիրապետության տակ և դարձել Սեբաստիայի էյալեթի մի մասը: Գտնվելով տարբեր երկրամասերի հարևանությամբ ու մեջտեղում՝ Մալաթիան հաճախ կցվում էր այս կամ այն նահանգին (էյալեթին): 1870-ական թթ. այն մտցվել է Խարբերդի (Մամուրեթ-ուլ-Ազիզ) նահանգի մեջ: 19-րդ դարի վերջին Մալաթիայի գավառը բաժանվում էր հինգ գավառակների՝ Մալաթիա, Աչքաթաղ, Հիսնի Մանսուր, Քյախտե և Պեհեսնի: Վերոնշյալ բաժանումը պահպանվեց մինչև 20-րդ դարի սկիզբը, որի մասին է վկայում 1914–1915 թթ. թուրքական պաշտոնական վիճակագրությունը: Մալաթիա գավառակի կենտրոնն էր Մալաթիա (Մելիտենե) քաղաքը (Սահակյան 2007, 209)՝ շրջակա 150 գյուղերով (Ալպոյաճեան 1961, 463):

Մալաթիայում նույնպես արհեստների մեծ մասը պահպանվել էր ավանդական ձևերով և գտնվում էր հայերի ձեռքում (Ալպոյաճեան 1961, 986, 1004): Գոյություն ունեցող արհեստներն էին՝ կոշկակարություն, … **պղնձագործություն**, ոսկերչություն, … զինագործություն, դարբնություն, երկաթագործություն, թիթեղաշինություն, … պայտարություն և այլն … (Ալպոյաճեան 1961, 986):

Եվրոպայից որպես նախապատրաստուկ ներմուծվում էին պղնձե գնդերը, որոնք այնուհետև հայ արհեստավորները տեղում ծեծելով (**ազատ կոմամբ**), վերածում էին պղնձե թերթերի, որից հետո էլ դրանցից պատրաստում առտնին իրեր, որոնք այնուհետև կլայեկվում էին՝ օքսիդացումից պաշտպանելու համար: Գրեթե բոլոր տներում հանդիպում էին պղնձե սինիներ, որոնք շատ հաճախ հար-

յուրավոր տարիների հնություն ունեին (Ալպոյաճեան 1961, 1004)։

Մալաթիայից դեպի Հալեպ, Այնթապ, Եդեսիա, Տիգրանակերտ, Խարբերդ, Ակն, Արաբկիր, Երզնկա, Սեբաստիա, Եվդոկիա, Կեսարիա, Սամսոն, Պոլիս և Եվրոպա էին արտահանվում կարպետ, գորգ, յուղ, պանիր, մեղր, ծխախոտ, տախտակ և այլն (Ալպոյաճեան 1961, 987–988), ներմուծվում՝ բրդեղեն, բամբակեղեն, մետաքսեղեն, շաքար, քարյուղ, **պղինձ**, երկաթ, կլայեկ, գամ, մոմ և այլն… (Ալպոյաճեան 1961, 988), Մարաշից ներմուծվում էր **պղինձ**, Երզնկայից՝ **պղնձե ամանեղեն**, Թոխատից (Եվդոկիա)՝ **պղնձե տախտակներ** (հումք՝ նախապատրաստուկ – Ա. Ա.), **պղնձե ամանեղեն** և այլն… (Ալպոյաճեան 1961, 989, 1000)։

Առաջին արհեստակցական միությունը 1908 թվականից հետո կազմել են պղնձագործներն ու անագագործները միասին, որոնք բոլորն էլ հայեր էին, որովհետև, – ինչպես նշում է հեղինակը, – պղնձագործությամբ զբաղվող նույնիսկ մեկ թուրք չկար։ «Պղնձագործները, որոնք հարուստ էին, կամ աւելի ճիշդը ունևոր, կը շինէին նոր ամաններ։ Ասոնք գիները կոտրելով իրարու ձեռքէն յաճախորդ կը կորզէին և այս մրցումին պատճառով վարպետները չէին կրնար գոհացուցիչ կերպով վարձատրել իրենց աշխատաւորները։ Միութիւնը կազմուելէն ետք, ամաններուն համար որոշ գիներ որոշուեցան, այդ գիներէն պակաս ծախողներուն համար տուգանք սահմանուեցաւ և այսպէս համաձայնութիւն մը ստեղծուեցաւ, և աւելի նպաստաւորուեցան։ Պղնձագործները քաղաքին մէջ կը գործէին և գիւղերը երթալու պէտք չունէին, բաւական ապահով ապրուստ մը և ընդհանրապէս համեստ դրամագլուխ մը ունենալով։ Իսկ դրամագլուխ չունեցողները կլայեկելու գործով կը զբաղէին, և որպէսզի յաճախորդներուն դիւրութիւն տային, չէին սպասեր, որ անոնք քաղաք գան, այլի իրենք կ’երթային գիւղերը ապրուստ ճարելու համար։ Մինչև այս միութեան կազմակերպութիւնը կլայեկողները – մանաւանդ անոնց գիւղերը շրջողները – ամենէն աւելի շահագործուողներն էին» (Ալպոյաճեան 1961, 1009–1010)։ Ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա, որ այստեղ նույնպես, ինչպես և Կեսարիայում, արհեստակցական միությունն ուներ հասարակական-կարգավորիչ դեր։

Էրզրումի նահանգ

Նահանգի կենտրոնն Էրզրում (Կարին) քաղաքն էր։ Որպես քաղաքային բնակավայր ձևավորվել է 5-րդ դարի առաջին տասնամյակներին, երբ Բյուզանդիայի Թեոդոսիոս 2-րդ կայսրը (408–150) ընդարձակելով բնակավայրը շրջապատող պարսպաշարը և ամրացնելով միջնաբերդը, այն վերանվանեց **Թեոդոսուպոլիս** (հայկական սկզբնաղբյուրներում՝ «**Կարնոյ քաղաք**») (Բադալյան 2015, IV)։

Էրզրում-Կարինը եղել է հայ գրչության և, ընդհանրապես, հայ մշակույթի նշանավոր կենտրոններից մեկը (Բադալյան 2015, V)։ Արդեն 17-րդ դարի երկրորդ կեսի ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն հավաստում էր, որ Էրզրումը Օսմանյան կայսրության տարանցիկ առևտրի կարևորագույն կետերից է (Մելքոնյան 2012, 7–8)։ Մեկ այլ ֆրանսիացի՝ 18-րդ դարասկզբի հեղինակ Պիտտոն դե Տուրնեֆորն ուղղակիորեն հաստատում է իր հայրենակցի միտքը. «Այս քաղաքը (Էրզրումը) Հնդկաստանից եկող ապրանքների համար տարանցիկ առևտրի կենտրոն է և

հանգստավայր…: Բոլոր ապրանքները, որոնցից գլխավորներն են Պարսկաստանի մետաքսը, բամբակը, թմրադեղերը, զանազան գույների մահուդը, անցնում են միայն Հայաստանի վրայով…: Մենք զարմացել էինք՝ տեսնելով Էրզրում ներմուծված այդքան մեծ քանակությամբ ներկ, որ կոչվում էր բոյա և օգտագործվում կաշվե ու բրդե գործվածքների ներկման համար» (Մելքոնյան 2012, 8):

18-րդ դարավերջի հայ աշխարհագետ Ղ. Ինճիճյանի վկայությամբ՝ Էրզրումի բարգավաճ վիճակի հիմնական աղբյուրը Հնդկաստանի ու Եվրոպայի միջև ընթացող տարանցիկ առևտրական ճանապարհների վրա գտնվելու հանգամանքն էր: Նույն հեղինակի խոսքով, այս քաղաքը զանազան ապրանքներ, հատկապես մորթեղեն, դեղորայքի կենդանական հումք, Ախալցխայից ստացված չորացրած մրգեղեն, **Թոխատից բերված պղնձե անոթներ**, գորգեր ու կարպետներ և այլն, առաքում էր գրեթե բոլոր ուղղություններով՝ մինչև Գաղիա (Ֆրանսիա), Հոլանդիա, Անգլիա, Գերմանիա: Քաղաքը սերտ տնտեսական կապեր ուներ նաև Մոսկվայի, Կոստանդնուպոլսի, Բալկանների, միջինասիական Բուխարա քաղաքի, Պարսկաստանի, Հնդկաստանի ու արաբական երկրների հետ (Մելքոնյան 2012, 8: Ջատիկյան, 2013, 59):

1818 թ. Կարինում կար պղնձագործական 29 արհեստանոց: Սրանք գործում էին միավորված և 1826 թ. մշակել էին «Գիր ուխտադրության և պայմանի» նշանավոր կանոնադրությունը, մի փաստաթուղթ, որը կասկած չի թողնում Կարինում եղած պղնձագործության բարձր մակարդակի մասին (ՀԺՊ, 1974, 96):

Էրզրում-Կարինն Արևմտյան Հայաստանի առավել խոշոր բնակավայրերից էր: Տարբեր տվյալներով 1914 թ. այն ուներ ավելի քան 55000 բնակիչ: Հայերի թիվը հասնում էր 14000–15000-ի (որոշ աղբյուրներ նշում են 20000 թիվը) (Բաղալյան 2015, IV):

Թվարկելով Էրզրումում և Կարսում 19-րդ դարավերջում գոյություն ունեցող արհեստները՝ Խ. Մառանկոզեանը, նշում է նաև պղնձագործությունը, որն ըստ ճյուղերի բաժանվում էր երեք խմբի. «1. ղազանճի (պղնձագործ), քէլէճի (սրանք հին ամանները կամ պղնձի հանածոյն հալելով ծախում էին), կլեկճի (անագապատողներ – Ա. Ա.)» (Մառանկոզեան 1891ա, 2):

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Էրզրումում գոյություն ունեցող արհեստների, առևտրի, բնակչության ու կենցաղի մասին տեղեկություններ են պահպանվել Երվանդ Լալայանի «Կարնոյ գաղթականութիւն» 80 էջանոց ձեռագիր աշխատության մեջ[3]:

«Էրզրումի բնակիչներից հայերը գլխաւորապէս պարապում էին վաճառականութեամբ: Էրզրումը Պարսկաստանի և Տաճկաստանի փոխադրական վաճառականութեան կեդրոնն էր, ուստի և թե տեղացի և թե օտար վաճառականներ անդադար լցվում էին Էրզրում և ծաղկեցնում վաճառականութիւնը: Ներբերում

3 Ե. Լալայանի «Կարնոյ գաղթականություն» 80 էջանոց ձեռագիր աշխատությունը մասնակի ուղղումներով և կրճատումներով լույս է տեսել «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտական պարբերականի 1974 թ. 3-րդ համարում (էջ 83–96), իսկ ամբողջական աշխատությունը տպագրվել է Ե. Լալայանի «Երկեր»-ի I հատորում (Երևան 1983), էջ 415–440: Մեր աշխատանքում (համեմատելով նշյալ երկու աշխատանքների հետ) նախապատվությունը տվել ենք բնօրինակին՝ մեջբերելով այն հատվածները, որոնք անհրաժեշտ են այստեղ:

էին՝ օսմանյան սահմաններից-շաքար, սուրճ, նիշատիր, լեղակ, կարմիր որդան, հինա, երկաթ, պողպատ, **պղինձ:** ... (Լալայան, Կարնոյ Գաղթականութիւն, 13)

Իսկ արտահանում էին՝ ցորեն, գարի, զանազան **պղնձեղէն** և արծաթեղէն շինուածքներ, զենք և այլն: Բացի վաճառականությունից, ժողովուրդը պարապում էր և արհեստներով, որոնցից առավելապես ծաղկած էր պղնձագործությունը» (Լալայան, Կարնոյ Գաղթականութիւն, 14):

Երզնկա

12 – 14-րդ դարերի Հայաստանի քաղաքների մեջ, որպես միջազգային առևտրի կարևորագույն հանգուցակետ և արհեստագործական կենտրոն, իր ուրույն տեղն ունի Երզնկան: Գտնվելով Արևելքը արևմտյան Եվրոպայի երկրների և Ռուսաստանի հարավային շրջանների հետ կապող կարևորագույն երկու ուղեգծերի վրա՝ Երզնկան մասնակցում էր միջազգային առևտրին թե՛ որպես Թավրիզ-Այաս բանուկ մայրուղու օղակներից մեկը, և թե՛ որպես Տրապիզոնի ցամաքային մատույց: Այսպիսով Երզնկայի առևտրականները Սերտ կապերի մեջ էին Կիլիկյան նավահանգիստների, Տրապիզոնի, Ղրիմի, ինչպես նաև Իրանի ու Հայաստանի վաճառաշահ քաղաքների՝ հատկապես Թավրիզի ու Անիի հետ (Խաչիկյան 1951, 74: Գևորգյան 2012, 111):

Իրենց հուշերում Երզնկայի մասին ուշագրավ և արժեքավոր տեղեկություններ են թողել 12 – 14-րդ դարերում այստեղ այցելած ճանապարհորդները: Եվրոպացի ճանապարհորդ Մարկո Պոլոն գրում է. «Այս մի մեծ երկիր է: Սկսվում է մի քաղաքից, որ կոչվում է Արզինգա, որտեղ հյուսում են աշխարհի լավագույն բեհեզները: Երկրի ժողովուրդը հայեր են» (Հակոբյան 1932, 48):

Արաբ պատմիչ Իբն-Ի Բատուտան (14-րդ դար) գրում է. «Արզանջանի (Երզնկա) բնակիչների մեծագույն մասը հայ է. մուսուլմանները խոսում են թուրքերեն. այնտեղ կան լավ կարգավորված շուկաներ. այստեղ շինում են գեղեցիկ կերպասներ, ով իր անունով են կոչվում: **Նրա մեջ կան պղնձի հանքեր, որով շինում են ամաններ և «բայսուս»-ներ, որ հիշեցինք. դրանք նման են մեր աշտանակներին**» (Իբն-ի Բատուտա 1940, 31):

17-րդ դարի վերջերից (1639 թ. Կասրե-Շիրինի պայմանագրով Հայաստանի բաժանումից հետո) մինչև 20-րդ դարի սկիզբը Երզնկան Էրզրումի էյալեթի նույնանուն գավառակի կենտրոնն էր (Հայաստանի ազգային ատլաս 2008, 56 – 57: Բաղալյան 2015, XXIX – XXX):

19-րդ դարում Երզնկայում պղնձագործությունը գտնվում էր յուրօրինակ բարձր մակարդակի վրա (Սիւրմէնեան 1947, 180: ՀԺՊ 1974, 96): Ուշագրավ է, որ նշված ժամանակահատվածում Երզնկայում գոյություն ունեցող մետաղագործական արհեստների մասին խոսելիս հեղինակը պղնձագործությունը թվարկում է «**ճարտար արուեստների**» շարքում (Սիւրմէնեան 1947, 180): Նա նախապես թվարկում է արհեստները՝ «ոսկերչութիւն, երկաթագործութիւն, դարբնութիւն» և այլն … (Սիւրմէնեան 1947, 169 – 172), այնուհետև՝ «**Տեղական ճարտարուեստը**» (Սիւրմէնեան 1947, 175) ենթավերնագրի ներքո նշում պղնձագործության և անագազօծության մասին (Սիւրմէնեան 1947, 180 – 181): Ինչպես տեսնում ենք, այստեղ

ոսկերչությունը նշված է դարբնության և երկաթագործության հետ միասին, իսկ պղնձագործությունն ու անագազօծությունը (անագապատում)՝ որպես **ճարտար արուեստներ**: Ավելին՝ շեշտում է նաև, որ Երզնկայի վարպետների պատրաստած պղնձագործական արտադրանքը (ափսեներ, ինքնաեռներ, գեղեցիկ ու նուրբ ջրամաններ) բարձր գնահատանքի և պարգևի է արժանացել Փարիզի, Վիեննայի և Ֆիլադելֆիայի համաշխարհային ցուցահանդեսներում (ՀԺՊ 1974, 96: Սիրմէ-նեան 1947, 180):

Կարսի նահանգ

Կարսն Արևմտյան Հայաստանի այն նշանավոր քաղաքներից էր, որտեղ դեռևս միջնադարում Բարձր զարգացման էին հասել արհեստներն ու առևտուրը: 10-րդ դարում դառնալով Բագրատունյանց մայրաքաղաք, Կարսը, հայ պատմիչ-ների վկայությամբ, վերածվեց խոշոր առևտրաարհեստավորական կենտրոնի, որտեղով անցնում էին Արևելք-Արևմուտք տարանցիկ առևտրական ճանապարհ-ները (Բազեյան 2006, 42):

1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կարս քաղաքի և շրջա-կա գյուղերի հայ բնակչության մի զգալի հատված գաղթեց՝ հաստատվելով Գյում-րիում և Շիրակում: Չնայած դրան՝ քաղաքը չկորցրեց իր առևտրաարհեստավո-րական դեմքը, իսկ 1878 թ. Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց և առանձին վար-չական միավոր դառնալուց հետո նոր վերելք ապրեց (Բազեյան 2006, 42):

Կարսում գոյություն ունեցող արհեստների մասին տեղեկություններ են պահ-պանվել Ատրպետի «Ինչ ժառանգեցինք» աղբյուրագիտական մեծ արժեք ունեցող ուսումնասիրության մեջ: «Ինչ ժառանգեցինք»-ը գրվել է 1933 թ. Լենինականում (այժմ Գյումրի) և վերաբերում է Ատրպետի ծննդավայր Կարս քաղաքին: Հեղի-նակն իր աշխատության առաջաբանում կարևորում է արհեստների դերը հայ ժո-ղովրդի կյանքում, գտնելով, որ «միակ փրկիչը արհեստավորն է»: Հատկանշական է, որ հեղինակն իր սեփական քննությունն է կատարում, անցկացնում է պատմա-կան զուգահեռներ՝ հաստատելու համար հայոց մեջ տվյալ արհեստի վաղ ծա-գումն ու զարգացումը, դրա տարածվածությունը, ներկայացնում է արհեստավո-րական արտադրանքի արդյունահանման ծավալները և այլն (Բազեյան 2006, 43):

Ուսումնասիրությունը գրված է խիստ կանոնակարգված, ողջ նյութը բաժան-ված է տասը մասի, 35 գլուխների, սրանք էլ՝ ենթագլուխների: Գլուխները վերաբե-րում են մայր արհեստներին, բաժինները՝ դրանց առանձին ճյուղերին, իսկ ենթագլուխներում ներկայացված են դրանց նեղ մասնագիտացումները (Բազեյան 2006, 43):

Աշխատանքի վեցերորդ մասը կոչվում է «Մետաղներ», գլուխները նվիրված են մետաղագործական արհեստներին՝ «Գլուխ XIV Պղինձ», «Գլուխ XV Դարբ-նոցներ», «Գլուխ XVI Վոսկերիչներ», «Գլուխ XVII Քանդակագործներ», «Գլուխ XVIII Թիթեղագործներ»:

«Պղինձ» գլխում ներկայացված է Կարսում գոյություն ունեցող պղնձագոր-ծական արհեստի վիճակը, որը ոչ ամբողջությամբ մեջբերում ենք այստեղ.

«§ 160. Հայաստանի ինչպես ամեն մի գավառը, ամեն մի լեռնաշղթան ու ապառաժը հարուստ են պղնձի հանքով, այդպես էլ ամեն մի ավանը և քաղաքը ունեն իրենց պղնձագործների արհեստանոցների շարքը: Պղինձն ինչպես անհրաժեշտություն է հասարակության, այդպես էլ ամեն մի տան մեջ նա բազմած է իր բարձր դիրքով. չի կարելի գտնել մի երկրագործի, հովվի, բանվորի և առևտրականի տուն, որ պղնձի ամաններ և գործիքներ չունենա: Մի առած կա, հին առած մեր երկրում, որ ասում է. «Դատի՛ր, վաստակի՛ր, վաստակդ տուր պղնձի կաթսային» (Ատրպետ, Ինչ ժառանգեցինք, 54):

«Կարսում Հաջի *Աբեր օղլուի խանին*[4] կից իր արհեստանոցն ու ձուլարանն ուներ *Մովսի Պապան, որի տոհմը Կարսում դարերով ունեցել է* պղնձագործի ձուլարանը, կոտորածներից, արձակումներից միշտ ազատվել են շնորհիվ իրենց արհեստանոց-ձուլարանով: Տիրող տարրերը-հափշտակողները կարիք էին ունեցել ձուլիչ արհեստավորների և ստիպված հովանավորել ու պաշտպանել են վարպետ արհեստավորներին: 1830 թ. հետո Կարսի նահանգի բովերը դադարեցին գործելուց, քարածուխով հալված պղնձի դեմ, չէին կարող փայտի ածխով հալված պղինձները գործել, քանի որ եվրոպական գործարաններից ... ստացած պղինձը չորս հինգ անգամ ավելի աժան էր նստում: *Մղսի Պապոն* հին, մաշված ջարդված պղինձները կիսագնի հավաքում, հալում, ձուլում, թերթերի էր վերածում և գործադրում (Ատրպետ 1933, 54):

§ 161 Կ. Պոլսի վաճառականները Եվրոպայից բերել տված թերթ-թիթեղի վերածված պղինձն ուղարկում էին Արզրում, Երզնկա, Կարս, Վան և այլուր, բայց այս պղինձը երեք չորս ձեռք անցնելով ավելի թանկ էր նստում, քան թե հների նորիլը: Բացի *Մղսի Պապոյից* Կարսում կենտրոնացան Ալաշկերտից, Արզրումից, Երզնկայից, Արդվինից պղնձագործներ, որոնք շուկային տիրել էին և լավ գործ ունեին: Բայց հեռավոր գավառներում Օլթի, ..., *Կաղզվան* և Արդահան էլ կային պղնձագործներ, որոնք ևս շրջանի ազգաբնակության կարիքներին բավարարություն էին տալիս (Ատրպետ 1933. 54):

§ 162 Կարսի նահանգը հարուստ է ո՛չ միայն ... պղնձի հանքերով, այլ *Կիցկիմ*, *Թորթում*, Օլթի, *Կոթի*, Արդահան, Ախալքալաք, Ծալկա, Լոռի, Ալավերդի, Սանահին, Դիլիջան, Բջնի, Կեչառիս մինչև Սևանի լճի ափերը *մասնագետ հանքաբանները* երեք հարյուրից ավելի բովեր էին բացել, որոնք գործել էին հնումը 40–50 դար և որոնք միաժամանակ 19-րդ դարում դադարեցին, գործել (Ատրպետ 1933. 55):

Պղնձի բովերի մշակությունը, պղնձագործությունը և ձուլարանները շատ վաղ ժամանակներից զարգացել էին ո՛չ միայն Արարատյան աշխարհում, Գուգարքում, Ուտիքում, այլ նաև հսկայական չափերի է հասել Եփրատի ու Տիգրիսի ափերում, Բալու, Արղենա Մադեն, Դիարբեքիր, այլ նաև ծաղկել է է Ուրարտական շրջանից էլ շատ վաղ: Ասորեստանի ինքնակալները արշավել էին Նաիրի երկիրը…» (Ատրպետ 1933. 55):

Էրզրումի և Կարսի արհեստների մասին խոսելիս Խ. Մառանկոզեանը տեղեկություններ է հաղորդում նաև 19-րդ դարավերջում նշված քաղաքներում գոյություն

4 Շեղ տառերով գրված են ձեռագրի դժվարընթեռնելի հատվածները:

ունեցող էսնաֆությունների (համքարությունների) մասին: Այստեղ նույնպես, ինչպես Կեսարիայում և Մալաթիայում, բացի արհեստավորների միջև և այլ հարցերը կարգավորելուց, համքարությունները կատարում էին իրենց հասարակական-կարգավորիչ դերը (Մառանկոզեան 1891ա, 1, 2: 1891բ, 1, 2: 1981գ, 1, 2: 1891դ, 1, 2):

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը, կարող ենք նշել, որ պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում 17–20-րդ դարասկզբում, չնայած քաղաքական և տնտեսական վայրիվերումներին, ունենալով վերելքի ու վայրէջքի պահեր, ընդհանուր առմամբ եղել է բարձր մակարդակի վրա՝ միաժամանակ լինելով և որպես արհեստ և որպես ժամանակի արդյունաբերության կարևոր ճյուղ: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ պղնձագործական արհեստը, ինչպես և գոյություն ունեցող մյուս արհեստներն ու առևտուրը, այս ժամանակաշրջանում գտնվել են եթե ոչ գերազանցապես, ապա հիմնականում հայ վարպետների ու վաճառականների ձեռքում:

Եվ վերջապես՝ կարևոր է նաև այն, որ եղել են պղնձագործների համքարություններ կամ արհեստակցական միություններ, որոնք բացի իրենց բուն նպատակից ունեցել են նաև որոշակի հասարակական-կարգավորիչ դեր: Ճիշտ է, հիշատակություններ կան միայն Կեսարիայի, Մալաթիայի, Երզնկայի, Էրզրումի և Կարսի պղնձագործական համքարությունների վերաբերյալ, սակայն բերված նյութը թույլ է տալիս ասելու, որ նման համքարություններ գոյություն են ունեցել նաև վերը նշված արհեստավորական մյուս կենտրոններում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

Ատրպետ «Ինչ ժառանգեցինք» – ՀՊԹ, ԱԼՖ, գործ 176:

Լալայան, «Կարնոյ գաղթականութիւն», ՀՊԹ, ԱԼՖ, գործ 11:

ՄԱՌԱՆԿՈԶԵԱՆ 1891ա – Մառանկոզեան Խ., Էրզրումի և Կարսի արհեստաւորների համայնական կարգերը, «ՄՇԱԿ» թերթ, Թիֆլիս, 1891, N 65:

ՄԱՌԱՆԿՈԶԵԱՆ 1891բ – Մառանկոզեան Խ., Էրզրումի և Կարսի արհեստաւորների համայնական կարգերը, «ՄՇԱԿ» թերթ, Թիֆլիս, 1891, N 66:

ՄԱՌԱՆԿՈԶԵԱՆ 1891գ – Մառանկոզեան Խ., Էրզրումի և Կարսի արհեստաւորների համայնական կարգերը, «ՄՇԱԿ» թերթ, Թիֆլիս, 1891, N 67:

ՄԱՌԱՆԿՈԶԵԱՆ 1891դ – Մառանկոզեան Խ., Էրզրումի և Կարսի արհեստաւորների համայնական կարգերը, «ՄՇԱԿ» թերթ, Թիֆլիս, 1891, N 68:

Գրականություն

ԱԶԻԶՅԱՆ 2003 – Ազիզյան Ա., Հայաստանի վերաբերյալ տեղեկություններ «Սըր Ջոն Մանդևիլի ճանապարհորդությունները» երկում (XIV դ.), «Հայոց պատմության հարցեր» 4, Երևան, 2003, էջ 31–35:

ԱԼՊՈՅԱՃԵԱՆ 1961 – Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, 1961:

ԱԼՊՕՅԱՃԵԱՆ 1937 – Ալպօյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937:

ԱԼՊՕՅԱՃԵԱՆ 1952 – Ալպօյաճեան Ա., Պատմութիւն Եվդոկիոյ հայոց, Գահիրե, 1952:

ԱՌԱՔԵԼՅԱՆ 1958 – Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դարերում, Հատոր I, Երևան, 1958:

ԱՍԱՏՐԵԱՆ 2016 – Ասատրեան Ա., Հայոց ազգագրութեան թանգարանի պղնձէ առարկաների գեղազարդման ընդհանուր բնութագիրը, «Հայկազեան հայագիտական հանդէս», Հատոր ԼԶ, Պէյրութ, 2016, էջ 125–150:

ԱՍԱՏՐԵԱՆ 2018 – Ասատրեան Ա., Սինիները հայոց աւանդական կենցաղում, «Հայկազեան հայագիտական հանդէս», Հատոր ԼԸ, Պէյրութ, 2018, էջ 253–266:

ԲԱՋԵՅԱՆ 2006 – Բազեյան Կ., XIX դարի Կարսի արհեստներն ըստ Ատրպետի «Ինչ ժառանգեցինք» ձեռագիր աշխատության, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» IX, Գյումրի 2006, էջ 42–46:

ԲԱԲԼՈՒՄՅԱՆ 2008 – Բաբլումյան Ա., Ժողովրդագրական փոփոխությունների հիմնական միտումները Խարբերդի Նահանգում XIX դարի վերջին և XX դարի սկզբին, «Հայոց պատմության հարցեր» 9, Երևան 2008, էջ 168–180:

ԲԱԴԱԼՅԱՆ 1986 – Բադալյան Գ., Վանի նահանգը 1840-ական–1914 թթ. (վարչա-քաղաքական և դեմոգրաֆիական ուսումնասիրություն), «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1986, № 3, էջ 13–28 :

ԲԱԴԱԼՅԱՆ 2015 – Բադալյան Գ, Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին, Մաս երրորդ: Էրզրումի նահանգի կենտրոնական ու արևմտյան գավառները և Էրզրում (Կարին) ու Երզնկա քաղաքները, «Վէմ» համահայկական հանդես, Երևան, 2015, № 4, էջ I–XLIII:

ԲԱԴԱԼՅԱՆ 2020 – Բադալյան Գ., Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին, Մաս 9: Դիարբեքիրի վիլայեթի Դիարբեքիրի սանջակը և Մարդինի ու Ջեզիրեի գավառները, «Վէմ» համահայկական հանդես, 2020 № 1, էջ 154–200:

ԴՈՒՄԻԿՅԱՆ 2012 – Դումիկյան Ա., Մետաքսի ճանապարհի առևտրում հայերի գործունեության արժևորումը XIII–XIX դդ. ֆրանսիացի ճանապարհորդների հուշագրություններում, «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ» (Միջազգային գիտաժողովի նյութեր, 21–23 նոյեմբերի, 2011), Երևան, 2012, էջ 167–174:

ԳԵՎՈՐԳՅԱՆ 2012 – Գևորգյան Ջ., Մետաքսի ճանապարհի Այաս-Թավրիզ առևտրական մայրուղին (XIII դ. երկրորդ կես–XIV դ. առաջին կես), «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ» (Միջազգային գիտաժողովի նյութեր, 21–23 նոյեմբերի, 2011), Երևան, 2012, էջ 109 -120:

ՋՈՒԼԱԼՅԱՆ 1985ա – Ջուլալյան Մ., Եվրոպացի հեղինակները Հայաստանի և հայերի մասին (XIII-XVI ԴԴ.). Աղբյուրագիտական ակնարկ, «Պատմա -բանասիրական հանդես», 1985, № 2, էջ 56–72:

ՋՈՒԼԱԼՅԱՆ 1985բ – Ջուլալյան Մ., Եվրոպացի հեղինակները Հայաստանի և հայերի մասին (XVI–XVIII ԴԴ.). Աղբյուրագիտական ակնարկ, «Պատմա-բանասիրական հանդես», 1985 № 3, էջ 23–40:

ԹՈՔՄԱՃԵԱՆ 2016 – Թոքմաճեան Հ., Գալէմքեարեաններ. Այնթապ-Դամասկոս-Հալեպ, 2016:

ԻԲՆ-Ի ԲԱՏՈՒՏԱ 1940 – Ոտար աղբյուրներ Հայերի մասին № 2, Արաբական աղբյուրներ, Իբն-ի Բատուտա, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940:

ԽԱՉԻԿՅԱՆ 1951 – Խաչիկյան Լ., 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը», «Տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան, 1951, № 12, էջ 73–84:

ԽՆԿԻԿՅԱՆ 1977 – Խնկիկյան Օ., Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1977:

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ 1990 – Կարապետեան Պ., Տիվիթ կոչուած թափծու գրչակալ կաղամարներ հայերէն արձանագրութիւնՆրով, «Հայկազեան հայագիտական հանդէս», Հատոր ԺԲ, Պէյրութ, 1992, էջ 81–106:

ՀԱԼԱՋՅԱՆ 1973 – Գ. Հալաջյան, Դերսիմի հայերի ազգագրությունը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» 5, Երևան, 1973:

ՀԺՊ 1974 – Հայ ժողովրդի պատմություն, Հատոր V, Երևան, 1974:

ՀԱԿՈԲՅԱՆ 1932 – Հակոբյան Հ., Ուղեգրություններ, Հատոր Ա, Երևան, 1932:

ՀԱՅԿ 1959 – Հայկ Վ., Խարբերդ և անոր Ոսկեղեն դաշտը (Յուշամատեան պատմական, մշակութային և ազգագրական), Նիւ Եորք, 1959:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՏԼԱՍ – Հայաստանի ազգային ատլաս, Հատոր Բ, Երևան, 2008:

ՄԱԼՈՅԱՆ 2006 – Մալոյան Ա., Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆի տեղեկությունները Տրապիզոնի մասին (XVIII դ. վերջին քառորդ), «Հայոց պատմության հարցեր» 7, Երևան, 2006, էջ 37–46:

ՄԵԼՔՈՆՅԱՆ 2001 – Մելքոնյան Ա., Ախալցխայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը ըստ թուրքական հարկացուցակների (16-րդ դ. Վերջ–18-րդ դ. սկիզբ), «Հայոց պատմության հարցեր» 2, Երևան, 2001, էջ 26–40:

ՄԵԼՔՈՆՅԱՆ 2005 – Մելքոնյան Ա., Հայ բնակչության էթնոկրոնական դիմախեղման գործընթացներն Արևմտյան Հայաստանում XVI–XVIII դարերում, «Հայոց պատմության հարցեր» 5, Երևան, 2005, էջ 47–60:

ՄԵԼՔՈՆՅԱՆ 2012 – Մելքոնյան Ա., Արևմտյան Հայաստանը արևելք-արևմուտք առևտրական հարաբերությունների ոլորտում, «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ» (Միջազգային գիտաժողովի նյութեր, 21–23 նոյեմբերի, 2011), Երևան, 2012, էջ 4–17:

ՄԽԻԹԱՐՅԱՆ 2017 – Մխիթարյան Վ., Ֆրեդերիկ Դյուբուա դը Մոնպերո՝ այդչափ հայտնի և մեզանում այդքան անծանոթ շվեյցարացի ճանապարհորդը (Պատմաաշխարհագրական և քարտեզագրական ուսումնասիրություն), Հայաստանի Հանրապետության և մերձավոր արտասահմանի երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, Երևան, 2017, էջ 82–90:

ՄՈՒՐԱԴՅԱՆ 2005 – Մուրադյան Հ., Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում XVI–XIX դարի առաջին կեսին, «Հայոց պատմության հարցեր» 4, Երևան, 2005, էջ 61–76:

ՊԱՏՐԻԿ 1974 – Պատրիկ Ա., Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ և գաւառի հայութեան, Պէյրութ, 1974:

ՍԱՀԱԿՅԱՆ 2002 – Սահակյան Ա., Սեբաստիայի նահանգի Ամասիայի գավառի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին, «Հայոց պատմության հարցեր» 3, Երևան 2002, էջ 86–90:

ՍԱՀԱԿՅԱՆ 2003 – Սահակյան Ա., Տիվրիկի գավառակի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դ. վերջին–20-րդ դ. սկզբին, «Հայոց պատմության հարցեր», 4, Երևան, 2003, էջ 77–83:

ՍԱՀԱԿՅԱՆ 2007 – Սահակյան Ա., Մալաթիայի գավառի հայ բնակչության թվաքանակը XIX դ. վերջին–XX դ. սկզբին, «Հայոց պատմության հարցեր» 8, Երևան 2007, էջ 209–221:

ՍԱՀԱԿՅԱՆ 2008 – Սահակյան Ա., Արաբկիրի սանջակի հայ բնակճության թվաքանակը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, «Հայոց պատմության հարցեր» 9, Երևան 2008, էջ 155–167:

ՍԻՒՐՄԷՆԵԱՆ 1947 – Սիւրմէնեան Գ., Երզնկա, Գահիրէ, 1947:

ՍՏԵՓԱՆՅԱՆ 2012 – Ստեփանյան Գ., Շամախահայերի դերը արևելյան Այսրկովկասի առևտրատնտեսական հարաբերություններում, «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ» (Միջազգային գիտաժողովի նյութեր), 21–23 նոյեմբերի, 2011, Երևան, 2012, էջ 198 -218:

ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ 1982 – Սրվանձտյանց Գ., Երկեր, Հատոր 2, Երևան, 1982:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2019 – Սուքիասյան Ռ., Սեբաստիայի հայության դեմ կիրառված պետական տնտեսական քաղաքականությունը, 1913–1915 թթ., «Գիտական Արցախ», Երևան, 2019, № 1, էջ 436–444:

ՏԱԳԷՍԵԱՆ 2015 – Տագէսեան Ա., Ցեղասպանութեան զոհ՝ Ուրֆայի պղնձագործութիւնը և անոր արհեստագէտ Յակոբ Մանարեան, «Հայկազեան հայագիտական հանդէս», Հատոր ԼԵ, Պէյրութ, 2015, էջ 375–398:

ՏԱԳԷՍԵԱՆ 2022 – Տագէսեան Ա., Ակնարկ հայկական արձանագրութեամբ պղնձեայ թասերու վրայ, «Հայկազեան հայագիտական հանդէս», Հատոր 42/1, Պէյրութ, 2022, էջ 339–350:

ՏԱԳԷՍԵԱՆ 2022բ – Տագէսեան Ա., Հայկական պղնձեղէնի Սարգիս Ջամպաքճեանի հաւաքածուն, «Հայկազեան հայագիտական հանդէս», Հատոր 42/2, Պէյրութ, 2022, էջ 525–550:

ՓՈԼԱՏԵԱՆ – 1969, Փոլատեան Ա., Պատմութիւն հայոց Արաբկիրի, Նիւ Եորք, 1969:

МАРТИРОСЯН 1964 – Мартиросян А. А., Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.

Artak Asatryan
History Museum of Armenia
sardarapatasatryan@gmail.com

COPPER-SMITH'S ART IN WESTERN ARMENIA AND ARMENIAN-POPULATED AREAS OF ASIA MINOR IN THE 19TH–EARLY 20TH CENTURY (HISTORICAL - ETHNOGRAPHICAL SURVEY)

Keywords: Western Armenia, copper-smith's art, handicraft centers, trade, Tokhat, Erznka, Karin.

In the 19th–early 20th century, the Armenian copper craft and trade developed in Western Armenia and adjacent Armenian-populated areas. Large handicraft centers were formed in Tokhat, Yerznka, and Karin. The work describes the activity and history of development of these centers.

Артак Асатрян
Музей истории Армении
sardarapatasatryan@gmail.com

МЕДНОЕ ДЕЛО В ЗАПАДНОЙ АРМЕНИИ И АРМЯНОНАСЕЛЕННЫХ ТЕРИТОРРИЯХ МАЛОЙ АЗИИ 19-ОГО–НАЧАЛА 20-ГО ВЕКОВ (ИСТОРИКО-ЭТНОГРАФИЧЕСКИЙ ОЧЕРК)

Ключевые слова: Западная Армения, медное дело, ремесленные центры, торговля, Тохат, Ерзнка, Карин.

С 19-ого века до начала 20-ого, в Западной Армении и прилегающих к ней армянонаселенных районах развивались армянское медное ремесло и торговля, образовывались крупные ремесленные центры, в числе которых Тохат, Ерзнка и Карин. В работе описывается деятельность и история развития этих центров.